*
* *

ԳԷՈՐԳ Ք. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՑԻ

«Մառ, որ սէր բերէ զպտուղ բարի,
Հատանի և ի հուր արկանի։»

Միայնակ տխուր անցնում են ժամերս
Հեռու՝ աշխարհի սին հաճոյքներից.
Անցնում են աւաղ, գնում են անյոյս,
Եւ լի տենչերով չեն դառնայ նորից,
Կմարի և իմ կեանք ինչպէս թոյլ ճրագ,
Կկորչի անհետ ինչպէս մի ժպիտ.
Եւ իղձերս անվերջ և եռանդիս կրակ
Կցամքին ինչպէս վտակը վճիտ։
Գիտեմ, որ կանցնեմ բոլորից աննշմար,
Չեմ խլի ջերմ արցունք սիրող աչերից,
Չի՛ բարձրանայ կոթող ինձ համար
Պսակով պատած թարմ դափնիներից։
Գիտեմ, հայ եղբայր, ոչ մի ափսոսանք
Չես թափի դու ինձ հողին յանձնելիս.
Դառը վշտերը, արցունքի հոսանք
Չեն տանջի սիրտդ ինձնից զրկուելիս։
Աւել ինչ պատիւ, քան մոռացութիւն
Ինձպէս անհատին տանջուող ազգի.
Ե՞րբ քեզ ցոյց աւի լի կարեկցութիւն,
Ե՞րբ քեզ զոհեցի ոյժը իմ բազկի։
Արդեո՞ք լիշեցի քաղցածես, տանջւած,

Ուզեցի՞ սրբել արցունքդ աչքերից,
Արդեո՞ք փորձեցի Հայրենիք ընկած
Ոտքի կանգնեցնել աւերակներից։
Արդեո՞ք թողեցի ոխ, ատելութիւն,
Ընկեր առ ընկեր միացանք գործի.
Արդեո՞ք յանձն առայ մի դժուարութիւն
Քո պատուի համար առանց մի վարձի։
Ա՛խ, որքան կուզեմ շուտ անցնի ժամերս,
Ինչպէս մի ստուեր ջնջուի անհետ,
Ինչպէս մի երազ ցնդուի կեանքս,
Եւ անարգ, ստոր անունս նորա հետ.
Որպէս զի անունս չը լինի ապտակ
Թարմ ուժով վառուած եկող սերնդին,
Եւ անշարժ կեանքս, ինչպէս օրինակ,
Նոցա քայլերը պինդ չկաշկանդին։

1889 թ., 20 Նոյեմբերի
Ղլաբ։